ՇԴ/0545/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 հոկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՇԴ/0545/01/25 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի սեպտեմբերի 12-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և

257-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ 69137625 (ՇԴ/0545/01/25) քրեական վարույթը:

1.1. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ.Իսրայելյան) 2025 թվականի սեպտեմբերի 17-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0545/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 30-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՇԴ/0545/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Հ.Մանուկյան) 2025 թվականի հոկտեմբերի 10-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0545/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հոկտեմբերի 13-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Վլադիմիր Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 257-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(…) [Ն]ա, Հովհաննես Ռազմիկի Հովհաննիսյանի, Արթուր Հմայակի Փանոսյանի և քննությամբ ինքնությունները դեռևս չպարզված այլ անձանց հետ, նախնական համաձայնությամբ և միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները փոխլրացնելով, տևական՝ 2021 թվականի հուլիսի 28-ից մինչև 2021 թվականի օգոստոսի 27-ն ընկած ժամանակահատվածում, բազմաթիվ նույնաբնույթ գործողություններով համակարգչային հափշտակությամբ ձեռք են*

բերել ուրիշի գույք հանդիսացող առանձնապես խոշոր չափերի՝ 12.150.000 ՀՀ դրամ գումարը:

Մասնավորապես, Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանը և նրա հանցակիցները, տեղյակ լինելով «**********» ԲԲ և «**********» ՓԲ ընկերությունների համակարգչային համակարգերի կողմից խաղային օգտահաշիվներից նշված ընկերությունների ավտոմատ կանխիկացման մեքենաներով (այսուհետ նաև՝ բանկոմատ) գումար կանխիկացնելու բնականոն ընթացքն ապահովող ծրագրային ապահովման թերությունից՝ «**********» ԲԲ և «**********» ՓԲ ընկերությունների բանկոմատների միջոցով գումարի կանխիկացման հարցմամբ խաղային օգտահաշիվներին կցված բջջային հեռախոսահամարին յուրաքանչյուր կանխիկացման նպատակով ստացված թվերի տեսքով մեկանգամյա կանխիկացման գաղտնաբառը երկու տարբեր բանկոմատներում մուտքագրելու և նույն խաղային հաշվից միևնույն գումարը միաժամանակ ստանալու հնարավորության մասին, «**********» ՓԲ ընկերության «********** և «**********» ՍՊ ընկերության «totogaming.am» բուքմեյքերական կայքերում, խաղադրույթներ կատարելու պատրվակով, իր և այլ անձանց անվամբ գրանցված խաղային հաշիվներին մուտքագրվել են դրամական միջոցներ: Այնուհետև, իրենց նախնական հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու՝ խաղային օգտահաշիվներին մուտքագրված դրամական միջոցները կրկնակի կանխիկացնելու և հափշտակելու նպատակով, ապահովել են դրամական միջոցները կանխիկացնելու հնարավորությունը, մասնավորապես, մուտքագրված դրամական միջոցների արհեստական շրջանառությունն ապահովելու նկատառումով, կատարել են պարտության ցածր հավանականություն ունեցող խաղադրույքներ, որի արդյունքում՝ խաղային օգտահաշվին գոյացած դրամական միջոցները՝ 41 կանխիկացման գործարքներով՝ «**********» ԲԲ և «**********» ՓԲ ընկերությունների բանկոմատների միջոցով գումարի կանխիկացման հարցմամբ խաղային օգտահաշիվներին կցված բջջային հեռախոսահամարին յուրաքանչյուր կանխիկացման նպատակով ստացված թվերի տեսքով մեկանգամյա կանխիկացման գաղտնաբառը և այդ խաղային օգտահաշվի նույնականացման համարը (user կամ unique ID-ին) առանց իրավաչափ հիմքով նախատեսված թույլտվության երկու

*տարբեր բանկոմատների ծրագրերում մուտքագրելով՝ բանկոմատների բնականոն աշխատանքին ներգործելով, Երևան և Գյումրի քաղաքներում գտնվող երկու տարբեր բանկոմատներից միևնույն խաղային օգտահաշվից միաժամանակ կատարել են միևնույն գումարի կանխիկացում, այդ կերպ հափշտակել առանձնապես խոշոր չափի՝ 12.930.000 ՀՀ դրամ գումար՝ «**********» ՓԲ ընկերությանը պատճառելով խոշոր չափի՝ 4.275.000 ՀՀ դրամ գումարի գույքային վնաս, իսկ «**********» ՍՊ ընկերությանը առանձնապես խոշոր չափի՝ 7.875.000 ՀՀ դրամ գումարի գույքային վնաս:*

(...)

Բացի այդ,

Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանը 2022 թվականի փետրվարի 25-ից մինչև 2022 թվականի փետրվարի 26-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային հափշտակությամբ ձեռք է բերել ուրիշի գույք հանդիսացող խոշոր չափերի՝ առնվազն 1.960.000 ՀՀ դրամ գումար:

*Մասնավորապես, Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանը տեղյակ լինելով «**********» ՓԲ և «**********» ԲԲ ընկերությունների համակարգչային համակարգերի, ծրագրերի կողմից խաղային օգտահաշիվներից նույն ընկերության բանկոմատներից գումար կանխիկացնելու բնականոն ընթացքն ապահովող ծրագրային ապահովման թերությունից՝ «**********» ՓԲ ընկերության բանկոմատների միջոցով «**********» ընկերության խաղային օգտահաշվից գումարի կանխիկացման դեպքում կանխիկացման նպատակով թվերի տեսքով հեռախոսահամարին ստացված մեկանգամյա՝ 24 ժամ ակտիվ, կանխիկացման գաղտնաբառը և այդ խաղային օգտահաշվի նույնականացման համարը՝(user ID)-ին, մուտքագրելու դեպքում բանկոմատի կողմից տրամադրվող թղթադրամները՝ բացառությամբ մեկի վերցնելու և բանկոմատում մեկ թղթադրամ թողնելու դեպքում բանկոմատը այն հետ տանելով արձանագրում է ամբողջ գումարի չստացման հնարավորության մասին, 2022 թվականի փետրվարի 25-ից մինչև 2022 թվականի փետրվարի 26-ն ընկած ժամանակահատվածում, բազմաթիվ նույնաբնույթ գործողություններով համակարգչային հափշտակությամբ ձեռք է բերել ուրիշի գույք հանդիսացող առանձնապես խոշոր չափերի՝ առնվազն 1.960.000 ՀՀ դրամ գումար,*

*«**********» ՓԲ ընկերությանը պարտաճառելով խոշոր չափի՝ առնվազն 1.960.000 ՀՀ դրամ գումարի գույքային վնաս: (…)»*[1]*:*

5. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Ն]ախնական դատաքննությունների ընթացքում, վարույթի ընդդատության հարցի քննարկման ժամանակ, Դատարանը քննարկման առարկա դարձրեց նաև պաշտպանական կողմի գրավոր միջնորդությունը՝ սույն վարույթի՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքին ընդդատյա լինելու հարցը, նկատի ունենալով, որ վարույթի բոլոր մասնավոր մասնակիցները (մեղադրյալը գտնվում է Արմավիր ՔԿ հիմնարկում), բնակվում են (գտնվում են) Երևան քաղաքում:*

Հանրային մեղադրող Կ.Հովսեփյանն ըստ էության առարկություն չներկայացրեց վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ և հայտնեց, որ ավելի նպատակահարմար է տարածքային ընդդատությունը փոխելը:

Տուժողի լիազոր ներկայացուցիչ Հ.Շահբանդարյանը ևս գտավ, որ ավելի նպատակահարմար կլինի վարույթը տեղափոխվի Երևան քաղաք:

*Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական վարույթով մասնավոր մասնակիցներ են հանդիսանում «**********» ՍՊ ընկերությունը, «********** և **********» ՍՊ ընկերությունը և «**********» ՓԲ ընկերությունը՝ լիազոր ներկայացուցիչներով, իսկ վկաներն են՝ ******* *******-ը, ******* *******-ը, ******** *********-ը, ******* ******-ը, ****** *******-ը, ********* ********-ը, ****** ******-ը և ********* ********-ը: Ընդհանուր առմամբ վարույթին ներգրավված է տասնմեկ (11) անձ՝ երեք մասնավոր մասնակից և ութ վկա: Իսկ վարույթի մասնակիցների գտնվելու վայրերի վերաբերյալ տվյալներից պարզ է դառնում, որ նրանցից տասը բնակվում են (գտնվում են) Երևան քաղաքում, մեկ վկան՝ Արմավիրի մարզում:*

Այսպիսով, վարույթի բոլոր մասնակիցները՝ բացի մեկ վկայից, բնակվում են Երևան քաղաքում և գտնվում է Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքի ներքո: Բացի այդ՝

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 7, թերթեր 48-58:

Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Վլադիմիր Պետրոսյանը արգելանքի տակ է գտնվում ՀՀ ԱՆ Արմավիր ՔԿ հիմնարկում:

(…)

Նկատի ունենալով, որ կողմերը տվել են իրենց համաձայնությունը ընդդատության փոխման վերաբերյալ, և վարույթի բոլոր մասնակիցները բնակվում են Շիրակի մարզից դուրս՝ Երևան քաղաքում, Դատարանը գտնում է, [որ] վարույթն ըստ ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ վարույթի արդյունավետ քննության անհրաժեշտությունից ելնելով (…)»[2]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Հ]արկ է արձանագրել, որ վկայակոչած իրավանորմի համաձայն՝ տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Այս առումով տեղին է նկատել, որ սույն հարցի կապակցությամբ որոշումը կայացվել է 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դատական նիստի ընթացքում և ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այդ դատական նիստին ներկա չեն գտնվել մեղադրյալը և վերջինիս պաշտպանը (պաշտպանները):*

Մինչդեռ, մեղադրյալի բացակայության պայմաններում տվյալ հարցի քննարկման վերաբերյալ դիրքորոշումներ արտահայտելը պետք է արձանագրել, որ քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատաքննություններ նշանակելու մասին որոշումն ուղարկվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետին՝ մեղադրյալ Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանի ներկայությունը 2025 թվականի սեպտեմբերի 30-ին նշանակված դատական նիստին ապահովելու նպատակով, սակայն 2025 թվականի սեպտեմբերի 30-ին ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է մուտքագրվել ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունն առ այն, որ հետ է վերադարձվում

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 71-72:

կալանավորված անձ Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանի վերաբերյալ Ձեր 17.09.2025թ. թիվ ՇԴ 6-11-27865/25 գրությունը, 19.03.2025թ որոշումը, քանի որ վերջինս, ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի հաշվառումներով չի անցնում: Ընդ որում, այս կապակցությամբ հարկ է նաև ընդգծել, որ 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դատական նիստի արձանագրության ձայնային կրիչի ուսումնասիրությամբ երևում է, որ մեղադրյալի ներկայության մասով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ըստ էության արձանագրվել է այն, որ հեռախոսազանգի միջոցով պարզվել է, որ նշված գրությունը սխալմամբ է ուղարկվել և մեղադրյալը գտնվում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, սակայն հայտնի չէ, թե մեղադրյալն արդյոք հայտնաբերվել է և ի վերջո բերելու են վերջինին, թե չեն բերելու: Այսինքն՝ վերոգրյալի պայմաններում Դատարանի գնահատմամբ հնարավոր չէ միանշանակորեն արձանագրել, որ Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանը ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում եղել է, թե ոչ, սակայն, այնուամենայնիվ, տեղի ունեցած դատական նիստի դրությամբ, ըստ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի գրության՝ Վլադիմիր Սերգեյի Պետրոսյանը տվյալ քրեակատարողական հիմնարկի հաշվառումներով չի անցնում: Սակայն անկախ դրանից էլ՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին էլ հայտնի չի եղել, ի վերջո մեղադրյալը. ներկայացվելու է, թե ոչ և առհասարակ մեղադրյալի վերաբերյալ որևէ տեղեկատվություն հայտնի չի եղել:

Այսինքն՝ վերոգրյալի արդյունքում Դատարանը գտնում է, որ 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման կայացման պահի դրությամբ չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պարտադիր պայմանը, այն է՝ տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ:

Ինչ վերաբերում է տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ փաստաբան Ժորա Սարգսյանի կողմից ուղարկված դիրքորոշմանը, ապա նախ հարկ է նշել, որ սույն գործով մեղադրյալը մինչև նախաքննության ավարտն ունեցել է այլ պաշտպան՝ հանրային պաշտպան Արման Բաղդասարյանը և ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթը

ստանձնելով և նախնական դատաքննություններ նշանակելով անձի պաշտպանի ներկայությունն ապահովելու նպատակով գրություն է հասցեագրվել ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակին, մինչդեռ նշված նիստին հանրային պաշտպան չի մասնակցել և որևէ փաստական տվյալ առկա չէ չմասնակցելու պատճառների վերաբերյալ:

*Իսկ ինչ վերաբերում է փաստաբան Ժորա Սարգսյանի կողմից ուղարկված գրավոր դիրքորոշմանը, ապա նախ հարկ է նշել, որ դրանով պաշտպանը ներկայացրել է բացառապես իր խնդրանքը և իր դիրքորոշումը տարածքային ընդդատությունը փոխելու հարցի կապակցությամբ: Այսինքն՝ նշված դիրքորոշման մեջ մեղադրյալի կամարտահայտության վերաբերյալ որևէ նշում առկա չէ: Իսկ ինչ վերաբերում է հնարավոր այն դատողությանը, որ այդ դիրքորոշումը ներկայացրել է մեղադրյալի պաշտպանը, հետևաբար դա բովանդակում է նաև մեղադրյալի կամարտահայտությունը, ապա հարկ է նշել, որ փաստաբան Ժորա Սարգսյանը որպես պաշտպան գրավոր դիրքորոշում է ուղարկել ***** ********** *********-ի դիմումի հիման վրա, ով նշել է, որ հանդիսանում է մեղադրյալի քույրը, սակայն այս առումով էլ հարկ է նկատել, որ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ևս 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դատական նիստով ըստ էության արձանագրել է, որ փաստաբան Ժորա Սարգսյանը, չնայած գործով ներգրավված չէ, սակայն առկա է ******* ******** ******-ի դիմումը, ով հավանաբար հանդիսանում է մեղադրյալի քույրը: Բացի այդ՝ այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ******* *******-ը դիմումը ներկայացրել է երկու փաստաբանների մասով, ընդ որում տվյալ գրավոր դիրքորոշումը ևս գրված է երկու փաստաբանների անունից, սակայն ստորագրված է միայն մեկ փաստաբանի կողմից: Այլ կերպ՝ ասվածի պայմաններում ինքնին միայն տվյալ փաստաբանի դիրքորոշումը հիմք ընդունելով որոշում կայացնելը, Դատարանի գնահատմամբ, չի ապահովում տարածքային ընդդատությունը փոխելու կապակցությամբ մեղադրյալի համաձայնության պայմանի առկայությունը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է մեղադրյալի համաձայնության պայմանը, հետևաբար ինքնին միայն պաշտպանի ցանկությունը չի կարող բխել օրենսդրական տվյալ ձևակերպումից: Վերոգրյալի*

հաշվառմամբ՝ Դատարանը գտնում է, որ այս պայմաններում ապահովված չէ մեղադրյալի դիրքորոշում հայտնելու իրավունքը: Բացի այդ՝ հարկ է արձանագրել նաև, որ նշված դատական նիստին ներգրավված երեք փուժողներից ներկա է գտնվել միայն մեկ փուժողի ներկայացուցիչը, մինչդեռ մյուս երկու փուժողների մասով որևէ դիրքորոշում չի ներկայացվել՝ պայմանավորված տարածքային ընդդատությունը փոխելու հետ: Դատարանն այս հանգամանքը կարևորում է այնքանով, որ փուժողները հանդիսանում են ընկերություններ և գաղտնիք չէ, որ այդ ընկերություններն ունեն նաև մասնաճյուղեր և քննարկման առարկա չի դարձվել, թե ի վերջո փուժողների ներկայացուցիչներին հնարավոր է ապահովել միայն Երևանից, թե հնարավոր է ապահովել մասնաճյուղերից, մասնավորապես՝ Շիրակի մարզի մասնաճյուղից: Այսինքն՝ վերոգրյալի պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն հարցի քննարկման հետ կապված թվով երկու փուժողների դիրքորոշում արտահայտելու իրավունքը նույնպես ապահովված չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում ընդդատության կանոնի կիրառմանը, ուստի գտնում է, որ հարկ է թիվ ՇԴ/0545/01/25 քրեական գործով ընդդատությունը որոշելու համար վարույթն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատին (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՇԴ/0545/01/25 վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 96-102:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

(…)

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

5. Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Փաստաբան Ժ.Սարգսյանը Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել մեղադրյալ Վ.Պետրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի հարցի քննարկման վերաբերյալ դիրքորոշում, որում, ի թիվս այլնի, նշել է՝ *«խնդրում եմ նաև քննության առնել նաև քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին ընդդատյա լինելու հարցը»*[7]:

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ կողմերը տվել են վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ իրենց համաձայնությունը, ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Շիրակի մարզից դուրս՝ Երևան քաղաքում, գտել է, որ վարույթն ըստ տարածքային ընդդատության պետք է

[7] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 47-53:

փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ վարույթի տարածքային ընդդատության հարցի քննարկումը չի իրականացվել մեղադրյալի մասնակցությամբ, իսկ պաշտպանական կողմի գրավոր դիրքորոշմամբ պաշտպանները ներկայացրել են բացառապես իրենց խնդրանքը, գտել է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ մեղադրյալի կամարտահայտությունը բացակայում է[9]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Մասնավորապես, սույն վարույթով Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը դատական նիստն անցկացրել է մեղադրյալ Վ.Պետրոսյանի բացակայությամբ և առանց վերջինիս՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ կամահայտնությունը պարզելու, որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին՝ հիմք ընդունելով փաստաբան Ժ.Սարգսյանի կողմից դատարան ներկայացված դիրքորոշումը: Նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ տվյալ պարագայում, առանց մեղադրյալ Վ.Պետրոսյանի համաձայնության, վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը իրավաչափ համարվել չի կարող:

---

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

14. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՇԴ/0545/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՇԴ/0545/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ